

Գերմանիոյ մէջ, 20-րդ դարու 70-ական եւ 80-ական տարիներուն, *քննախօսութեան բարոյագիտութեան* (գերմ. բնագիր՝ Diskursethik, անգլ.՝ Discourse Ethics) ռաիվիականները դարձան, ժամանակակից փիլիսոփաներ՝ **Ապել** (Karl-Otto Apel, 1922 – 2017 թ.) եւ **Հաբերմաս** (Jürgen Habermas, *1929 թ.): Անոնք մեծապէս ջատագովեցին, առանց որեւէ ճնշումի բարոյական քննարկման կարելիութիւնը ընկերութեան մը մէջ, հարթելու համար բարոյագիտական հարցերը: Ժողովրդավարական այս կարելիութիւնը սակայն, զանազան պատճառներով, առաջին շրջանին, մնաց համալսարանական սահմաններուն մէջ, որպէս փիլիսոփայական քննախօսութիւն, խօսոյթ կամ բանավեճ:

Բարոյագիտական տեսութիւններու շարքին, տե՛ս նաեւ որպէս առանձին բաժին ներկայացուած «*Քննախօսութեան բարոյագիտութիւն*»ը, իր որոշ մանրամասնութիւններով (Էջ 218):

6. ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ

20-րդ դարու վերջաւորութեան եւ 21-րդ դարու սկիզբը, ընկերային ու քաղաքական տարբեր պատճառներով ընդհանուր հետաքրքրութեան ու բարոյական վիճարկման յաճախակի նիւթ դարձան՝ բնապահական, տնտեսական եւ բժշկական-առողջապահական հարցեր եւ ժամանակակից երեւոյթներուն որպէս արդիւնք, յառաջացան.-

- Բնապահութեան բարոյագիտութիւնը (Environmental Ethics),
- Տնտեսութեան բարոյագիտութիւնը (Business Ethics) եւ
- Բժշկութեան բարոյագիտութիւնը (Medical Ethics):

Ա.- Բնապահութեան Բարոյագիտութիւն

Արդի գիտութեան մեծաքայլ զարգացումը բնութեան համար սպառնալիք մը դարձած էր այլեւս: Այս պատճառով եւ կանխելու համար բնութեան խաթարումը, կարգ մը փիլիսոփաներ հետամուտ եղան բնապահութեան կարեւոր տեղ շնորհելու՝ բարոյագիտութեան մարզէն ներս: Այս նպատակադրումով, բարոյական վարմունքի սկզբունքը, *Գերագոյն Բարին*, կը փոխանակուի այլ սկզբունքով մը, որ չարիքէն (վնասէն) կարելի եղած չափով խուսափիլն է. կամ այլ բացատրութեամբ մը՝ Գերագոյն Բարին կը նկատուի՝ «*խուսափումը վատագոյն չարիքէն*»ն. այս պարագային «վատագոյն չարիք»ը՝ մարդկային սեռի ու երկիր մոլորակի բնաջնջումն են:

Բնապահական այս իմաստով, կարգ մը փիլիսոփաներու մօտ, ինչպէս՝ գերման-ֆրանսացի բժիշկ ու խաղաղասէր **Ա. Շվեյցերի** (Albert Schweitzer, 1875 – 1965 թ.) մօտ կամ գերման բարոյագետ **Հ. Եոնասի** (Hans Jonas, 1903 – 1993 թ.) մօտ, կը յառաջանայ նպատակաբանական մտապատկեր մը, որուն բարոյական բարձրագոյն սկզբունքը՝ պատկառանքն ու ակնածանքն է՝ հանդէպ ընդհանրապէս կեանքին ու երկիր մոլորակի բնութեան: Ա. Շվեյցերի բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ «*Ակնածանք՝ կեանքի հանդէպ*» (գերմ. բնագիր՝ „Ehrfurcht vor dem Leben“) եւ «*Ակնածանք՝ կենդան-*